

ՅԵՐԱՍԱԿԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ

Ե.

Պարս օտերապայ Թոփաորի Ժոր Հայոց :

ՄԱՅԻՍԻ մէջ հրատարակած Հայկական յիշատակաց տախտակին վրայ պղնձէ դրամի մը պատկերք կայ 1 Թուով, որ մէկ հատիկ է, նմանը դեռ գտնուած չէ : Պատկերին գլխու Թագը մէկէն կ'իմացընէ որ Հայոց հին Թագաւորներուն մէկուն պատկերն է, անունն ալ է Օահրատ որ հռոմերէն Օատրիատ ըսուեր է, և դրամին հակակողմը իր պատուանունն ալ նշանակած է նոյն պէս յունարէն գրով և լեզուով (Թափաոր Թոփաորայ . այս բառերուն մէջ կը տեսնես՝ կայծակներու խուրձ մը, որ ուրիշ հին Թագաւորաց դրամներու վերան ալ կայ, և կ'երևնայ նշան ինքնակալութեան կամ զօրութեան, ինչպէս որ կայծակն էր նշան Մրամազգայ մեծ շաստուածոյն, որ բոլոր աշխարհիս տէրն և ամենազօր իշխանն կը սեպուէր :

Այս իտրենացին և ոչ ուրիշ Հայ պատմիչ մը Օահրատ անունով Թագաւոր կը յիշեն, ուստի պէտք է օտար արգաց դիմենք աս Թագաւորը ճանչնալու համար : Բնութեան հայոց Թագաւոր կը յիշեն այս անունովս, որ զանազան կերպով գրելով կ'անուանեն Օատրիատ, Օարիադր, Օասրիասդր, և Թարիատ, և այլն . բայց սովորական է դրամին վրայ գրուածը Օատրիատ, որ մենք կը դարձնենք Օահրատ, և անշուշտ այս էր կամ Հրահատ էր հայերէն հնչումն : Իսկ այն երկու Օահրատներէն մէկն է մեր Սիջին Տիգրանայ որդին, որուն պատմութիւնն ալ Հայոց պատմաց մէջ չգտնուիր : Յոյն և լատին պատմիչք գրեթէ ամենքն ալ այս որդին իր հօրը անուամբ Տիգրան կ'անուանեն, և կը պատմեն թէ հօրը դէմ ապստամբեցաւ և Պոմպէոսի դիմեց, Պոմպէոս ալ հաշտեցուց հայրը որդւոյն հետ . բայց երբ որ անիկայ ստահակօրէն նորէն ուզեց դէմ ելլել ոչ միայն հօրը՝ այլ և Պոմ

պէոսին, Պոմպէոս ալ բռնեց զինքը ու հռոմ տարաւ իրեն յաղթանակին զարդըրաւ գերիի պէս անցընելով բոլոր հռոմայ մէջէն, արժանաւոր պատիժ ծնողաց անհաւան որդւոց : Այս պատմութիւնս միաբան պատմած ըլլալով հին և ժամանակով մօտիկ պատմիչներէ, անհիմն չէ . բայց անունը կրնար տարակուսուիլ, որովհետեւ մեր Թագաւորաց մէջ ոչ երբեք կը յիշուի հայրն ալ որդին ալ նոյն անուամբ . անոր համար աւելի հաւանական է Սաղերիոս Սաքսիմոսին տուած անունը այս ապրտամբ որդւոյն որ է Օահրատ, զոր ինքը Օարիասդր կ'անուանէ : Բայց չենք կարծեր թէ ասոր ըլլայ այս դրամը . հապա աւելի հաւանական է որ ուրիշ հնագոյն Օահրատայ մը ըլլայ, որ է Կոստանց կամ Փոքր Հայոց կողմերուն իշխող Թագաւորը, Սաղարչակէն և մեր Մշակունեաց Թագաւորութենէն 40 տարի առաջ : Խորենացին Սահէի և Սաղարչակայ միջոցի իբր 180 տարուան դիպուածներէն բան մը չպատմեր Հայոց վրայ, ստոյգ գրուած պատմութիւն մը չգտնելուն, և ատեն չունենալուն քննել Յունաց զանազան պատմաց մէջ յիշուած կարճ յիշատակները : Վիտորոս Սիկիլիացոյն Սատնադարանն ալ քովս չէ ըսելով, լաւ սեպեր է ամենեւին բան չըսել քան թէ վերիվերոյ և տարակուսական բաներ թողուլ . այսչափ միայն կ'իմացընէ՝ որ շատերը Հայոց Թագաւորութիւնը կանգնելու կամ յափշտակելու ետեւէ էին՝ ինչուան որ Մշակունիք եկան տիրեցին բոլոր Հայաստանի : Մտնցմէ մէկն ալ էր մեր Օահրատը, կտրիճ նախարար մը, որ առաջ երբոր Հայաստան Սելեւկիացոց իշխանութեան տակն էր ընկած՝ անոնց Սեծն Մատիոքոս Թագաւորին զօրավարն էր, և վերակացու դրուած էր Փոքր կամ Զորորդ Հայոց կողմերուն, երբոր այս Թագաւորը հռոմայեցուց և ուրիշներու հետ պատերազմի զբաղեր էր :

1 Գիրք Ա . Է :

Օ ահրատ միաբանելով իր իշխանա-
կցին հետ, որ էր Մ րտաշիաս մեծ նա-
խարարը Ս էրին հայոց վերակացուն,
բոլորովին ապստամբեցան ՚ի Ս էլէէկիա-
ցւոց, պատերազմով ալ յաղթեցին ա-
նոնց, և երկու թագաւորութիւն հաս-
տատեցին, Մ րտաշիաս տիրեց Ս էրին
հայոց և աթուրը դրաւ Մ րտաշատ քա-
ղաքը, Օ ահրատ Օ տփաց մէջ տիրեց,
որ հիսկու Տիարպէքիրու սահմանները
կիյնայ. և քաջութեամբ երկուքն ալ
ընդարձակեցին սահմանսին, և հուս-
մայեցւոց հետ դաշինք դնելով բարե-
կամութեան՝ անվախ թագաւորեցին,
և թողուցին թագը իրենց զաւկրներ-
նուն ինչուան Ս աղարշակայ ատեն. այն
քաջ Ս որփիւլիկէսն ալ որ Ս աղարշա-
կայ հետ կռուեցաւ և սպաննուեցաւ,
ինչպէս կը պատմէ Խորենացին¹, այս
Օ ահրատայ որդին կամ թոռն կը կար-
ծուի:

Մ յս պատմութիւնը շատ ծանօթ է
Լւերոսացւոց, որոնք հայոց թագաւո-
րութեան սկիզբը վերոյիշեալ Մ րտա-
շիասէն և Օ ահրատէն սկսած կը սե-
պեն. թէ որ մեզմէ մէկը ուզեր միայն
մեր ազգային պատմչաց հետեւելով հին
արեւմտեան աղբիւրները թողուլ՝ Օ ա-
հրատայ պատմութիւնն ալ իրեն հա-
մար տարակուսական բան մը պիտի ե-
րենար, թէ որ անոր թագաւորելէն
2000 տարի վերջը աս դրամը աշխար-
հիս մէկ ծայրէն դուրս չելեր, որ գրտ-
նուեցաւ 1818ին Ղաերմանիոյ Ս այէն-
ցաւ քաղքին մօտ Ախտերհինկէլ Տայմ
գեղը գեանի տակ, ուր որ ատենօք մե-
ծըն կարողոս Ղաղղիոյ և Ղաերմանիոյ
կայսրը պալատ մը կանգնեց է եղեր Բ
դարուն վերջերը: Ա՛րբ և ինչ ճամբով
Վրիստոսէ 189 տարի առաջ հայոց
վրայ իշխող թագաւորի մը դրամ, որ
ամենէն հին հայոց դէմք մը և թերևս
հայկայ արեւակցինը՝ մեղի կ'ընծայէ,
հայաստանին փոշիէն ելեր և Ղաերմա-
նիոյ հողուն մէջ է ընկեր, մենք չենք
ուզեր քննել, գիտնալով որ դրամը աշ-

¹ Գիւրբ Բ. ք. Է:

խարհիս ամենէն մեծ ճամբորդն է, և
ամէն արգելքի կը յաղթէ:

Վուխոյ Սանտպէրկէր Ղաերմանա-
ցին առաջին անգամ աս դրամին վրայ
լատիներէն տեղեկութիւն մը հրատա-
րակեց հանդերձ պատկերովը, ուսկից
օրինակած է մերն ալ. և իր դրուած-
քէն օրինակ մը զրկեց մեր միաբանու-
թեանը ճեմարանին հանդերձ նամա-
կով, որուն մէջ ազնիւ բանասէրը պարտք
կը սեպէ ասանկ ցանկալի հայկական
զիւտը հաղորդելու անոնց՝ որոնց ջանքը
յատուկ կերպով նուիրած է իրենց
հայաստան հայրենեացը օգտին և փա-
ռացը. մենք ատենին հատուցած եմք
իրեն մեր շնորհակալութիւնը, այս ա-
ռիթս ալ կ'առնումք թէ նոյնը հրատա-
րակելու և թէ օրինակ ընծայելու ազ-
գայնոց և յորդոր այն բարեսիրութեա-
նը՝ որուն որ շատ փափաքելով յայտ-
ներ եմք հայոց յիշատակարանաց վրայ
խօսիլ սկսած ատեննիս¹:

հ. Ղ. Մ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Վաւանա:

ՎԱԹԱՆ կամ Վատանա քաղաքը Սի-
կիլիոյ մէջ Ատնա լեռան հարաւային
կողմի ստորտը կ'իյնայ, որ Վաքշա
կղզւոյն գաղթականները շինեցին Վը-
րիստոսէ 726 տարի առաջ, Սիրակու-
զայի հիմնադրութենէն եօթը տարի
վերջը: Հրաբուխին մօտ ըլլալով շատ
անգամ երկրաշարժէ կործանած է.
Պոմպէոս ալ Սիկիլիոյ պատերազմին
ժամանակը աս քաղաքս կործանեց, բայց
Ստրաբոնին ըսածին նայելով, () գոս-
տոս կայսրը նորէն նորոգեց. և հրա-
բուխին մօտ ըլլալով օտարականաց եր-
թակեկութեամբը շատ ծաղկեցաւ, և
ատեն մը Մրագոնայի² թագաւորները

¹ Հատ. 2. 154:

² Արագոնա հիմա պզտի քաղաք մըն է, և հին ա.